«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագիծ

ՈՐՈՇՈՒՄ

13 մայիսի, 2025 թվական, N 1-Լ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԵԿՏՈՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի թիվ 914-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման կարգի» 4-րդ կետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 23-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի առաջարկությունը՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված՝ Երևան քաղաքի Ալեք Մանուկյան 1 հասցեում գտնվող տարածքի (անշարժ գույքի) մի մասը (12 քմ, և 31,7 քմ մակերեսներով) և Երևան քաղաքի Աբովյան 52 հասցեում գտնվող տարածքի (անշարժ գույքի) մի մասի (118,2 քմ մակերեսով) վարձակալության տրամադրելու վերաբերյալ և հայտ ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

13 մայիսի, 2025 թ.

ք. Երևան